ՀՏԴ : 929:891.981 Չոլաքյան + 39(479.25)

ՀԱԿՈԲ ԱԲՐԱՀԱՄԻ (ՄԱՐՏԱ) ՉՈԼԱՔՅԱՆ
(Ծննդյան 75-ամյակի առթիվ)*



Բնավորությամբ անչափ համեստ, հայագիտության բազմաթիվ բնագավառներ (մանկավարժություն, ազգագրություն, բանագիտություն, լեզվաբանություն, բարբառագիտություն, գրականագիտություն, պատմագրություն, սփյուռքագիտություն, հուշագրություն և այլն) ընդգրկող իր արժեքավոր հետազոտությունների քանակով՝ չափազանց «անհամեստ» Հակոբ Չոլաքյանը դարձավ 75 տարեկան:

Բազմավաստակ հայագետ-մանկավարժը ծնվել է 1947 թ. հոկտեմբերի 16-ին Սիրիայի Քեսապի շրջանի Գարատուրան գյուղում: Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրի Ազգային Մեսրոպյան և Քեսապի Հայ ավետարանական նահատակաց նախակրթարաններում: Միջնակարգ-երկրորդական ուսումն Այնճարի (Լիբանան) Հայ ավետարանական երկրորդական վարժարանում ստանալուց հետո՝ 1968-ին, նույն վարժարանում անցել է մանկավարժական աշխատանքի:

1969–1970 թթ. Բեյրութի Հայկազյան քոլեջի հայագիտական ամբիոնի մասնավոր ուսանող լինելով՝ Հ. Չոլաքյանը 1970-ին ընդունվում է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը:

Անսահման է Չոլաքյանի հայրենապաշտությունն ու բնապաշտությունը, իսկ նման աշխատասիրություն ու ձգտումներ ունեցող սփյուռքահայ ուսանողի կերպարը խորհրդային մտածողությամբ համակուրսեցիներիս համար անսովոր ու ինչ-որ տեղ անընկալելի, թերևս, նաև ուղենշային երևույթ էր: Երեք տարվա իր ուսանողական կյանքն անցկացրեց գերծանրաբեռնված ու գերհագեցած: Հ. Չոլաքյանը ոչ միայն հասցնում էր մասնակցել Հայաստանի տարբեր շրջաններում կազմակերպված արշավներին, հիանալ հայոց բնաշխարհով ու հայկական ճարտարապետական հուշարձաններով, այլև «ազատ ժամերին» հանդիպել 1946-ին հայրենադարձված իր հայրենակից քեսապցիներին, նրանցից ձայնագրել ազգագրական և բանահյուսական նմուշներ, նույնիսկ ժողովրդական երգերը նոտագրել տալ Կոմիտասի անվան կոնսերվատորիայում:

Ինչ խոսք, այդ աշխատանքը նրան հոգեհարազատ էր, քանզի դեռևս 1969–1970 թթ.՝ Բեյրութի Հայկազյան քոլեջի հայագիտական ամբիոնի մասնավոր ուսանող եղած ժամանակ, նա զբաղվել էր բանահավաքչական աշխա-

---

* Ներկայացվել է 12. IX. 2022 թ., ընդունվել է տպագրության 09. XI. 2022 թ.:

տանքով և հասցրել նույնիսկ հավաքած նյութերից տպագրել իր ուսուցչապետ Գրիգոր Շահինյանի «Ահեկան» պարբերականում:

Երեք տարի սովորելով ԵՊՀ-ում և այդ ընթացքում հնգամյա կուրսի բոլոր քննությունները փայլուն հանձնելով՝ Հ. Զոլաքյանը 1973-ին բանասերի և հայոց լեզվի ու գրականության ուսուցչի որակավորմամբ վերադառնում է Այնճար: 1973–1976 թթ. նա աշխատում է տեղի Հայ ավետարանական, Բեյրութի Երվանդ Տեմիրճյան և Ազգային Խանամիրյան վարժարաններում: 1976 թ. Բեյրութում սկսված քաղաքացիական կռիվների պատճառով տեղափոխվում է Սիրիա և աշխատանքի անցնում Հալեպի Քարեն Եփփե ճեմարանում՝ միաժամանակ դասավանդելով Հալեպի Մխիթարյան վարժարանում ու Մխիթարյան հայագիտական ամբիոնում: 1996-ից Զոլաքյանը դասախոս է աշխատում նաև Հալեպի Համազգայինի հայագիտական հաստատությունում:

Սիրիայում սկսված իսլամիստ ծայրահեղականների ձեռնարկած քաղաքացիական պատերազմի և Հալեպի գնդակոծությունների պատճառով 2012-ին Հ. Զոլաքյանը ստիպված ընտանիքով տեղափոխվում է հայրենի Քեսապ՝ ծննդավայր Գարատուրան գյուղ, իսկ 2014 թ. մարտի 21-ին՝ Թուրքիայի հովանավորությունը վայելող հակապետական ծայրահեղ խմբավորումների՝ Քեսապ ներխուժումից հետո, նա վերջնականապես հաստատվում է Երևանում:

Թվում է՝ 67-ամյա բազմավաստակ մանկավարժ-հայագետը, իր վրա կրելով Բեյրութի, Հալեպի և քեսապյան պատերազմների հետևանքով եռակի արտագաղթի ճակատագիրը, Երևան է վերադարձել՝ վաստակած հանգիստը Մայր հայրենիքում վայելելու համար: Բայց եթե ոմանց համար ընդունելի և ինչ-որ տեղ նաև հաճելի կարող է հնչել «Ալուրս մաղել եմ, մաղն էլ պատից կախել եմ» առածը, ապա Զոլաքյանի նման պրպտուն միտք ու անհանգիստ բնավորություն ունեցող մշակի համար դա ոչ թե անելիքի ավարտն էր ազդարարում, այլ նոր սկիզբը, քանի որ նրա և՛ «ալյուրն» է անսպառ, և՛ «մաղելիքը»՝ անվերջանալի:

Եվ քանի որ 2002-ին Հ. Զոլաքյանն իր աշակերտ, պ. գ. թ. Գևորգ Յազըճյանի պարտադրմամբ իր իսկ գրանցած նյութերի հիման վրա ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում պաշտպանել էր գիտական թեզը[1] և ստացել պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, ուստի Հայաստան տեղափոխվելուց հետո ինստիտուտի տնօրինությունը վաստակաշատ գիտնական-մանկավարժին անմիջապես աշխատանքի է ընդունում Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության բաժնում՝ որպես ավագ գիտաշխատող: Իսկ 2016 թ.՝ Քեսապին նվիրված ծանրակշիռ դոկտորական ատենախոսությունը[2] պաշտպանելուց հետո, նրան տրվում է առաջատար, այնուհետև՝ մի քանի տարի անց, գիտական աննախադեպ գործունեության համար՝ գլխավոր գիտաշխատողի պաշտոն:

ԵՊՀ-ի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնը ևս 2014 թ. սիրով հրավիրում է Մայր բուհի իրենց նախկին սանին՝ արդեն բազմավաստակ

---

[1] *Անտիոքի մերձակա Ռուճի հովիտի հայերը (պատմա-ազգագրական ուսումնասիրություն), հրատ. «ՌիթՀՀրտ եւ Թինա Գարոլան» հրատարակչական հիմնադրամի, Թիւ 2, Անթիլիաս, 2006, 260 էջ:*

[2] *Հ. Զ ո լ ա ք յ ա ն. Քեսապ, հ. Ա, Հալէպ, 1995, 572 էջ, հ. Բ, Հալէպ, 1998, 568 էջ, հ. Գ, Հալէպ, 2004, 672 էջ:*

լեզվաբան, սփյուռքահայ դպրոցական և բուհական տանյակ դասագրքերի հեղինակ Հ. Զոլաքյանին՝ համատեղությամբ դասավանդելու արևմտահայերեն: Համատեղությամբ նա մի քանի տարի աշխատում է նաև ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի ավան լեզվի ինստիտուտի արևմտահայերենի բաժնում:

Միայն 2014–2022 թթ. հայրենիքում իր երկրորդ շնչառությունը ստացած Զոլաքյանը հրատարակում է ազգագրական, լեզվաբանական, հուշագրական և այլ կարգի ավելի քան 16 գիրք:

Բեղուն և բազմաշնորհ է 75-ամյա Հ. Զոլաքյանի վաստակը՝ տարբեր բնագավառներ ընդգրկող շուրջ 60 գիրք, պարբերականներում տպագրված բազում հոդվածներ, մեծ արձագանք գտնող համացանցային տարաբնույթ գրառումներ, ակնարկներ, զանազան օգտաշատ հարցազրույցներ, գիտական և մանկավարժական զեկուցումներ ... Ժողովուրդը նման տաղանդաշատ մարդկանց համար ասում է. «Աստված որ մեկին տալիս է, էլ չափ ու սահման չի ճանաչում»:

Բացի աստվածատուր բանաստեղծական շնորհքից, Զոլաքյանը մանկավարժության այն եզակի նվիրյալներից է, ով ուսուցչություն-դասախոսությունը զուգակցել է իր իսկ պատրաստած դպրոցական և բուհական դասագրքերի հրատարակությամբ: Նրա հեղինակած դպրոցական դասագրքերը ավելի քան երեք տասնամյակ է՝ կիրառվում է Սփյուռքի տարբեր գաղութների հայկական նախակրթարանների ու միջնակարգ և երկրորդական դպրոցներում:

Բերիո թեմի ազգային առաջնորդարանի հովանավորությամբ Հ. Զոլաքյանի պատրաստած գունատիպ «Հայերէնի դասագիրքս»՝ Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ (1990–1993) 6 գրքերի շարքերը՝ ուսուցչի համար համապատասխան ուղեցույցներով, բովանդակությամբ, մեթոդով, ձևով ու նպատակներով նորություն էին ոչ միայն հայկական սփյուռքում, այլև Հայաստանում: Իսկ միջնակարգ և երկրորդական կարգերի համար Զոլաքյանի պատրաստած գրականության և լեզվի «Անդաստան» ձեռնարկի Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ (2009–2014) 6 գրքերի շարքերում լեզվագիտությունն ու գրականությունը համընթաց ընթանում են մինչև 12-րդ կարգ:

Հայրենիքում Զոլաքյան մանկավարժը բուհերի բանասիրական ֆակուլտետի ուսանողների համար իրար հետևից հրատարակում է ավանդական ուղղագրությանն ու արևմտահայերենի քերականությանը նվիրված մի շարք ձեռնարկներ՝ «Աւանդական ուղղագրութիւն (կանոնակարգ եւ խնդիրներ)» (2016), «Արեւմտահայերէնի քերականութիւն (կանոնակարգ եւ խնդիրներ), Ա. գիրք» (2017), «Արեւմտահայերէնի կանոնակարգման հարցեր (Զթեքուող խօսքի մասեր)» (2018), «Գործնական արեւմտահայերէն» (2018), «Արեւմտահայերէնի քերականութիւն (կանոնակարգ եւ խնդիրներ), Բ. գիրք» (2019) և այլն:

Ճիշտ է, Հ. Զոլաքյանի առաջին գիրքը՝ «Այսպէս սկսաւ գարունը» (1970), քնարականությամբ լեցուն պոետիկ հոգու առաջին, բայց հասուն ճիչն էր, այնուամենայնիվ, բանաստեղծությունների ժողովածուի լույս ընծայումից հետո 23-ամյա Զոլաքյանը մտածված իր մեջ լռեցրեց բանաստեղծին և գիտակցաբար դարձավ ավելի քան մեկ հազարամյակ առաջ՝ IX–XI դդ. լայնածավալ գաղթի հետևանքով Միջերկրականի ափամերձ Անտիոքի տարածաշրջանի

Քեսապի շրջանում հանդիսանած հայության նյութական և բանավոր մշակութային ժառանգության ժողովրդական մատենագիրը: Եվ պատահական չէ, որ Հ. Զոլաքյանի հրատարակած գրքերի գերակշիռ մասը շուրջ 3 տասնյակ կազմում են հենց այդ տարածաշրջանի հայության պատմա-ազգագրական և բանասիրական աշխատությունները՝ «Քեսապի Ժողովրդական Երգարուեստը», «Միջ-գաւառական Անեքթոտներ», «Քեսապ, Ա, Բ, Գ հատորներ», «Քեսապի բարբառը», «Անտիոքի Մերձակայ Ռուճի Հովիտի Հայերը. պատմա-ազգագրական ուսումնասիրութիւն», «Ցամքած Աղբիւրը Նորէն Կը Բխի (Սարգիս Գապաղեանի պատումը Մուսա Լերան հերոսամարտի մասին)», «Քեսապի Երեք Օրերը (21–23 Մարտ, 2014)», «Քեսապի նիւթական մշակոյթը» և այլն:

Սփյուռքագիտության համար արժեքավոր են Արևելքի հայկական գաղթօջախներին նվիրված Զոլաքյանի ուսումնասիրությունները, հատկապես՝ հայկական դպրոցների հուշամատյանները՝ «Յիսնամեակ Քարէն Եփփէ ազգային ճեմարանի» (1947–1997), «Ութսունամեակ Հալէպի Ազգային Սահակեան վարժարանի» (1927–2007), «Ոսկեմատեան Քուէյթի ազգային վարժարանի» (1961–2011), «Տարեգրութիւն Հալէպի Հայ աւետարանական Բեթէլ վարժարանի» (1923–2013):

Զոլաքյանը ստվարածավալ երկու հատորով ներկայացրել է սիրիահայ դպրոցի պատմությունը՝ նկարագրելով նաև շուրջ 110 հայաբնակ վայրերում գործող 240 ամենօրյա և դրանց կից՝ կիրակնօրյա, երեկոյան, գիշերային, արհեստի ու ամառային դպրոցները [«Սուրիահայ Դպրոցի Պատմութիւն, հ. Ա, հ. Բ» (2021)]:

Մանկավարժական և բանասիրական բազմաբնույթ գործունեությանն առընթեր՝ գրականությունն ու գրականագիտությունը միշտ Զոլաքյանի առօրյայի մասն են կազմել: Սփյուռքում Զոլաքյանը եղել է հայ գրողների հոբելյանական հանդիսությունների փնտրված ատենաբանը: Նա իր ելույթներով, հոդվածներով ու մենագրությամբ հանրությանն է ներկայացրել գրական որոշ շրջանակների (Սիրիա, Կ. Պոլիս, Արցախ) հայ գրականության առօրյան [«Արցախեան ինքնաճանաչման բանաստեղծութիւնը» (1990)]:

Եթե Հ. Զոլաքյանի ու նրա հրատարակած գրքերի մասին շուրջ 80 հոդվածներ, գրախոսություններ են գրվել ու գնահատանքի խոսքեր ասվել, այնուամենայնիվ, ինձ չհաջողվեց վաստակաշատ ու բազմաշնորհ մանկավարժ-հայագետի վաստակը ըստ արժանվույն գնահատելու վերաբերյալ Սփյուռքի տարատեսակ կառույցների և միությունների կամ հայկական ազդեցիկ կուսակցությունների ներկայացուցիչների կողմից որևէ փաստ ու փաստաթուղթ գտնել:

Դրան հակառակ, Մայր հայրենիքը, բարձր գնահատելով սփյուռքահայ բազմավաստակ մտավորականի մանկավարժական և գիտական գործունեությունը, Հ. Զոլաքյանին 2010 թ. պարգևատրում է ՀՀ վարչապետի Պատվո հուշամեդալով, իսկ 2011-ին՝ ՀՀ նախագահի Մովսես Խորենացի շքանշանով:

Որքան էլ հաճելի ու պատվաբեր լինեն հայրենի պետությունից ստացած պարգևները՝ Զոլաքյանի համար ամենամեծ կոչումը «ՈՒՍՈՒՑԻՉ ԸԼԼԱԼՆ է»: Իր 54 տարիների ուսուցչությունը համարում է իր ամենամեծ պարգևն ու նվաճումը:

Այս տարվա գարնան վերջին 75-ամյա Հ. Զոլաքյանը Մայր բուհում իր ուսուցչական գործունեությունը դադարացնելու վերաբերյալ հայտարարություն էր արել: Այդուհանդերձ, նա այն եզակի մանկավարժ-գիտնականներից է, որի հանգիստը հայությանը, հայկական կրթօջախներին ու գիտությանը մինչև վերջին շունչը ծառայելն է:

Ավելի քան կեսդարյա իմ կուրսընկեր և գործընկեր Հ. Զոլաքյանն այժմ էլ գիտական աշխատանքային գործունեությանը զուգահեռ՝ առկա և առցանց եղանակով շարունակում է մանկավարժական բուռն գործունեություն ծավալել: Նա լեզվի ուսուցման մեթոդական ու գործնական աշխատանքներ է վարում Սկյուռքի հայկական մի շարք դաղթօջախների ուսուցչական խմբերի հետ, նրանց հետ անցկացնում տիպար դասեր, ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ՝ մասնակցելով նաև հայոց լեզվի ուսուցմանը, հայեցի դաստիարակությանն ու հայ դպրոցին նվիրված գիտաժողովներին, հանդես գալով ուսուցման զանազան հարցերին նվիրված հոդվածներով:

Ծննդյան 75-ամյակի կապակցությամբ շնորհավորենք բազմավաստակ հայագետ-մանկավարժ Հակոբ Զոլաքյանին ու ցանկանանք՝ այսուհետ ևս երիտասարդական ավյունով շարունակի իր ազգանվեր գործունեությունը՝ ի նպաստ արևմտահայերենի պահպանման և հայ մշակույթի ու գիտության զարգացման:

ԱՐՄԵՆ Շ. ՍԱՐԳՍՅԱՆ

Բ. գ. դ., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության պատմության և տեսության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ բանահավաքչություն, գրականություն և բանահյուսության փոխառնչության հարցեր, երգիծական մանրապատումներ և զվարճախոսություններ, մանկական զվարճախոսություններ, հայ ժողովրդական պատումներ: Հեղինակ է 6 մենագրության և ավելի քան 90 հոդվածի: armensargg@gmail.com